

**Նոր Զուլայի Ս. Ամենափրկիչ Վանքի «Ս. Ներսէս Շնորհալի» գրադարանի  
էլեկտրոնային շտեմարանի ստեղծումն ու զարգացման հեռանկարը**

Լալագէ Թահմազեան

Սպահանի Հայոց Թեմի Սուրբ Ամենափրկիչ Վանքի ,Ս. Ներսէս Շնորհալիե գրադարանի  
գրադարանավարի օգնական

Նոր Զուլայի Ս. Ամենափրկչեան Վանքը, իր հիմնադրութեան օրից ունեցել է գրչագիր գրքեր, որոնց վրայ յետագայում աւելացել են նաեւ տպագիր գրքերը, սակայն մինչեւ 1844 թականը դրանք յատուկ տեղ ու պահեստ չեն ունեցել:

Համաձայն Նոր Զուլայի պատմագիր՝ Յարութիւն Տէր-Յովհաննէանի, Յովհաննէս Սուրէնեան Առաջնորդի ժամանակ, առաջին անգամ լինելով, Վանքի սեղանատան մի մասն անջատելով՝ դարձել է գրատուն, որտեղ եւ հաւաքել են Վանքում եղած գրչագիր ու տպագիր գրքերը:

Այս գրչագիր ու տպագիր գրքերի թիւը գնալով այնքան է շատանում, որ 1905-6 թականներին, կառուցում է մի առանձին շէնք՝ «Ս. Ամենափրկչեան Մատենադարան»-ը, Նոր Զուլայի պատմագիր՝ Յարութիւն Տէր-Յովհաննէանի յիշատակին, իր որդու՝ Թադէոսի նիւթական միջոցներով:

Մինչեւ 1974 թականը, գրադարան-մատենադարանը յատուկ անուն չի ունեցել. վերոյիշեալ թականին, երբ նշում էր Ս. Ներսէս Շնորհալու վախճանման 800-ամեակը, մի պատշաճ հանդիսութեամբ, նախաձեռնութեամբ ժամանակի Առաջնորդ Մեսրոպ Վրդ. Աշճեանի, անւանել է «Ս. Ներսէս Շնորհալի» գրադարան-մատենադարան, որի առթիւ մի ցուցատախտակ եւս փակցւել է մուտքի մօտ:

Գրչագրերի առթիւ լոյս են տեսել երկու հատորով ցուցակներ: Դրանցից առաջինը կազմւել է 20-րդ դարի սկզբում, Սմբատ Տէր-Աւետիսեանի կողմից, որը կրկին անգամ վերանայւել է ու պակասները լրացւել են, իսկ երկրորդ հատորը կազմւել է Լ.Գ. Մինասեանի կողմից, որոնք երկուսն էլ տպագրւել են Վիեննայում 1970 եւ 1972 թականներին, «Գալուստ Գիւլբէնգեան» հիմնարկութեան հայկական բաժնի մատենաշարով:

1972 թականին Թեմակալ Առաջնորդ Գարեգին Եպս. Սարգիսեանի ջանքերով նորոգում է գրադարանը, որին միացում են Նոր Զուլայում եղած միւս ժողովրդական գրադարանները, որոնք են՝ Հայ Ակումբի «Րաֆֆի», Հայ Կանանց Գթութեան Միութեան «Երկունք», Հայ Կանանց Բարեգործական Ընկերութեան «Իզմիրլեան» եւ ազգային դպրոցների գրադարանները: Վերանորոգած գրադարանի բացումը կատարւել է 1972 թականի ապրիլի 2-ին:

1986 թականին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան նիւթական միջոցներով, տպագրեց Նոր Ջուղայի Վանքի գրչագրերի գունաւոր ալբոմը՝ Բելգիայում, Պրոֆ. Արբակ Մխիթարեանի եւ Սիրարփի Տէր Ներսիսեանի աշխատութեամբ ու ջանքերով:

Սպահանի Հայոց Թեմի Թեմական խորհրդի որոշումով եւ հանգուցեալ աստղագէտ Ալենուշ Տէրեանի կտակած նիւթական միջոցներով, «Ս. Ներսէս Շնորհալի» գրադարանը հիմնական նորոգութեան ենթարկեց 2014 թականին եւս: Յատկանշելի է, որ տարիների գրադարանավար՝ հանգուցեալ Լեւոն Մինասեանի անունը անմահացնելու եւ գրադարանում նրա թողած վաստակն ու աւանդը յաւերժացնելու նպատակով, Թեմի Թեմական խորհրդի որոշմամբ, գրադարանի ընթերցասրահը կոչել է նրա անամբ: Գրադարանի «Լեւոն Գալուստի Մինասեան» ընթերցասրահում ստեղծել է ընթերցանութեան եւ հետազոտութեան համար յարմարութիւններ: Սոյն սրահում տեղադրել է համացանցին միացած երեք համակարգիչ, որոնք օժտել են էլեկտրոնային գրքերով:

Ս. Ամենափրկչեան վանքի «Ս. Յովսէփ Արեմաթացի» եկեղեցու կառուցման 350-ամեակի ծրագրերի շրջագծում, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա շնորհազարդ Վեհափառ Հայրապետի ձեռամբ, 2014 թականին կատարեց վերանորոգած գրադարանի հանդիսաւոր բացումը:

Գրադարանի գրքերի գրանցման եւ որոնման համար գնել է համակարգչային ծրագիր, որը թարգմանել է հայերէնի: Ծրագիրը իր մէջ պարունակում է որոնման առցանց (online) համակարգ, որի ուղղութեամբ «Ս. Ներսէս Շնորհալի» գրադարանի անամբ յղում (link) է կատարել Ազգային Առաջնորդարանի պաշտօնական կայքում: Սոյն հասցէի միջոցով ցանկացողների համար հնարաւորութիւն է ստեղծել հայերէն եւ պարսկերէն լեզուներով որոնել գրադարանում առկայ գրքերը, նրանց տւեալները եւ թայնացման պարագային թային տարբերակը:

Համակարգչում գրքերը գրանցել են իրենց ամբողջ տւեալներով՝ վերնագիր, հեղինակ, խորագիր, համառօտագրութիւն, բովանդակութիւն եւ այլն:

Անցնող ամիսների ընթացքին 1641-1920 թթ.-երին պատկանող 6593 հայերէն գիրք եւ 1920-ից յետոյ 15226 հայերէն եւ պարսկերէն լեզուով գրքեր է ցանկագրել ինտերնետային որոնման համակարգում:

Սակայն քանի որ հնարաւոր չէ գրադարանի հնատիպ գրքերը տրամադրել ցանկացողներին, հարցի կարգաւորման համար, Հայաստանի Ազգային Գրադարանի նախաձեռնութեամբ ստեղծած հնատիպ գրքերի էլեկտրոնային շտեմարանից օգտւելով, հնատիպ գրքերի էլեկտրոնային տարբերակի յղումը տեղադրել է կայքում եւ հասանելի է դարձել դիմորդներին:

Թեմական խորհուրդը ընթերցանութեան նկատմամբ համայնքիս մանուկների հետաքրքրութիւնը բարձրացնելու նպատակով, գրադարանում առաջացրել է մանկական բաժին եւ օժտել համապատասխան հնարաւորութիւններով:

Գրադարանը բաժանորդագրուել է գրական, գիտական եւ քաղաքական նոր ամսագրերի:

«Ս. Ներսէս Շնորհալի» գրադարանը համալրում է ամենամեայ կարգով նոր գնւած գրականութեամբ, ինչպէս նաեւ տարբեր անձանց եւ հաստատութիւնների միջոցով նւիրւած գրքերով:

2016 թականի մարտ ամսին Սպահանի Հայոց Թեմի Թեմական խորհրդի հրաւերով, Նոր Զուղա է ժամանել Հայաստանի Ազգային Գրադարանի տնօրէն պրն. Տիգրան Զարգարեանը, Նոր Զուղայի գրադարանների՝ ի մասնաւորի Ս. Ամենափրկիչ վանքի «Ս. Ներսէս Շնորհալի» գրադարանի հետ ծանօթանալու, փորձի եւ գիտելիքի փոխանակման, համատեղ հարցերի եւ գրադարանի գործունէութեան քննարկման նպատակով: Պրն. Տիգրան Զարգարեանի Նոր Զուղա այցելութեան շրջագծում, համագործակցութեան յուշագիր կնքուեց Սպահանի Հայոց Թեմի Թեմական խորհրդի եւ Հայաստանի Ազգային Գրադարանի միջեւ: Յուշագիրը նպաստելու է աշխարհով մէկ սփռւած հայագիտական կենտրոնների հետ յարաբերութիւնների ամրապնդման, խորացման ու երկխօսութեան խթանմանը, կարեւորելով փաստաթղթերի թայնացումը, թային գրադարանի ստեղծումը, հայ տպագիր ժառանգութեան արժեւորումը, թայնացման միջոցով վտանգւած նիւթերի երկարաժամկետ պահպանումը, «ՀԱՅԿԱԿԱՆՔ» հայագիտական հանգոյցի համապարփակ հայեցակարգի մշակումը եւ կենսագործման հարցերը:

Ս. Ամենափրկիչ վանքի «Ս. Ներսէս Շնորհալի» գրադարանի եւ Հայաստանի Ազգային Գրադարանի համագործակցութեան շրջանակում Հայաստանի Ազգային Գրադարանին են ուղարկուել Հայաստանի հնատիպ գրքերի հաւաքածոյից բացակայ՝ հնատիպ գրքերի թայնացւած տարբերակներ: Նաեւ, շուրջ 70 գրքեր են յայտնաբերուել 1801-ից 1850 թականներին պատկանող, որոնք ՀԱՅ ԳԻՐՔ ցանկում ընդհանրապէս նշւած չեն. դրանք նոյնպէս թայնացման ընթացքի մէջ են:

Գրադարանը ընդարձակելով իր աշխատանքը, համայնքիս անդամներից բացի, հեռակայ նիւթեր է տրամադրում նաեւ օտարերկրացի դիմորդներին եւ ուսումնասիրողներին, որոնց ցանկացած նիւթերը անվճար թայնացւում եւ ուղարկւում է իրենց:

Նոր Զուղայում հրատարակւած գրքերը Հայաստանի Ազգային Գրադարանին տրամադրելուց բացի, այժմ ուղարկւում է նաեւ Կալիֆորնիայի Համալսարանի գրադարանի

միջին-արելեւեան ուսումնասիրութեան բաժնին, Ֆրանսիայի Ազգային Գրադարան եւ այլ կենտրոնների:

Գրադարանն ունի նաեւ օտարլեզեան հազարաւոր գրքեր եւ մամուլի մի ճոխ ժողովածո: Արդէն սկսել են նաեւ օտարլեզեան գրքերի գրանցման աշխատանքները որից յետոյ նախատեսուում է մեծածաւալ մամուլի գրանցումը, դասակարգումը եւ թայնացումը:

Այս տարի նշում է Ս. Ա. վանքի «Ս. Ներսէս Շնորհալի» գրադարան-մատենադարանի հիմնադրման 110-ամեակը, որի ծրագրերի մեկնարկը տրեց Հայաստանի Ազգային Գրադարանի տնօրէնի եւ կրթական ու մշակութային ոլորտին առնչուող անհատների հանդիպմամբ: Ծրագրերում նախատեսուել է գրքի տարածման, հրատարակման աշխատանքներ, ռադիո-հաղորդումներ, հնատիպ գրքերի եւ գրադարանային արխիւների ցուցահանդէս եւ այլ ծրագրեր: Սոյն ծրագրերի շարանում նշելու է նաեւ հայերէն առաջին տպագիր Աստուածաշնչի 350-ամեակը, որտեղ ցուցադրուելու է «Ս. Ներսէս Շնորհալի» գրադարանի հնատիպ գրքերի հաւաքածոյին պատկանող, 1666 թ.-ին Ամստերդամում հրատարակած սոյն Աստուածաշնչի տպագիր երկու օրինակները:

Վերջում լիայոյս ենք որ սոյն համաժողովի արդիւնքում, հնարաւորութիւն կունենանք առաւել ընդլայնելու մեր կապը, սփիւռքի բոլոր գրադարանների հետ եւ իրագործելու գրքափոխանակման աշխատանքը: